ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

«ՏՈՒՀԱՑ ԳԱՒԱՌԻ» ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» 1975 թ. № 2-ում լույս տեսավ պրոֆ. Աս. Մնացականյանի «Դիտողություններ «Վարդգես Մանկան» վիպական հատվածի վերաբերյալ» խորագրով ուշագրավ հոդվածը։ Հեղինակը մանրամասն ուսումնասիրության է ենթարկել Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» մեջ պահպանված մի առասպելի բեկորը։ Ահա այն.

«Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէգ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»[1]։

Աս. Մնացականյանը հանգել է հետևյալ եզրակացության. «Վարդգես Մանկան մասին պահպանված բանահյուսական փշրանքը մասունք է ոչ թե Երվանդ վերջին, այլ Երվանդ I արքային նվիրված հին էպոսից։ Վերջինս հավանաբար եղել է Տիգրան I-ին նվիրված էպոսի սկզբի դրվագը։ Երվանդ I-ը նստել է ոչ թե Վանում, այլ Արարատյան դաշտում, Արտիմեդ կոչված քաղաքում։ Ըստ երևույթին, այս քաղաքը հետագայում ձուլվել է մ. թ. ա. 570—560-ական թթ.՝ իր հարևանությամբ կառուցված Վարդգեսավանին՝ ընդգրկվելով Վաղարշապատի պարիսպների մեջ։ Երվանդունիների տոհմը, Երվանդ արքան, ինչպես նաև Վարդգես Մանուկը վեպում օժտված են եղել դիցաբանական շեշտված գծերով՝ կապված հին ժամանակներին հատուկ պատկերացումների հետ։ Վարդգես Մանկան հայրենիքը՝ Տուհաց գավառը պիտի որոնել Հյուսիսային Հայաստանում»[2]։

Այստեղ մենք նպատակ չունենք անդրադառնալու Աս. Մնացականյանի հոդվածին ընդհանրապես, այլ ուզում ենք կանգ առնել լոկ Տուհաց գավառի՝ Վարդգես Մանկան «հայրենիքի» տեղադրության հարցի վրա։

Ինչպես տեսանք, ըստ Աս. Մնացականյանի «Տուհաց գավառը պիտի որոնել Հյուսիսային Հայաստանում»։ Ինչի՞ հիման վրա է հոդվածագիրը հանգել այդ եզրակացության։ Այստեղ ավելորդ չէ մեջբերել աղբյուրներում պահպանված տվյալները այդ տեղանվան-ցեղանվան մասին, ինչպես և ուսումնասիրողների կարծիքները, որոնք բարեխղճորեն ի մի է հավաքել Աս. Մնացականյանն իր հոդվածում՝ մեկնությամբ հանդերձ։

«Վերևում քննված հարցերի կապակցությամբ,— գրում է նա,— հատուկ նշանակություն է ստանում Վարդգես Մանկան հայրենիքի՝ «Տուհաց գաւառի» տեղի հարցը։ Որոնումներ այս ուղղությամբ ևս եղել են, հայտնվել են տարբեր կարծիքներ, որոնք ցարդ ի մի չեն բերված։ Հիշենք կարևորները։ Մ. Էմինը գրել է. «Որտեղի՞ց եկավ Վարդգես Մանուկը, ո՞ւր

1 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գ, 65։

2 Աս. Մնացականյան, Դիտողություններ «Վարդգես Մանկան» վիպական հատվածի վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 232։

է գտնվել Տուհաց գավառը և ի՞նչ է նշանակում «կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»,—հարցեր են, որոնց մենք հանձն չենք առնում պատասխանել»։

Գ. Խալաթյանցը փորձել է Տուհաց գավառը կապել Բասենում գտնվող Դու գյուղի հետ, որը հիշատակել են Ղազար Փարպեցին, Սեբեոսը և ուրիշներ։ Քանի որ «Դու» անունը «Տուհից» շատ է հեռու, ուստի առաջարկված ենթադրությունը մատնվել է մոռացության։ Հետագայում Ն. Ադոնցը, հրատարակելով Դիոնիսիոս Թրակացու քերականությունը և հայ քերականների մեկնաբանությունները, ուշադրություն հրավիրեց նրանց մոտ առկա «գոդերձական, տուհ, վրացի» վկայության վրա, նշելով լոկ այն, թե «Название Տուհ встречается у Хоренского»։ Այս փաստին անմիջապես անդրադարձավ Ն. Մառը։ Երկու հայագետներն էլ իրավացիորեն կապ տեսան նշված «Տուհ» և «Տուհաց գաւառ»-ի միջև։ Պիտի ասել, սակայն, որ նրանք վերոհիշյալ ակնարկներից հեռու չգնացին, իսկ «Տուհ»-ն էլ կապեցին վրացական միջավայրի հետ՝ չտալով բավարարող մեկնաբանություն։ Հետագայում այս կարծիքն էլ, որի հիմքում ընկած է հարցի լուծման բանալին, փաստորեն մատնվեց մոռացության։ Դրա փայլուն վկան է Ստ. Մալխասյանցի ծանոթությունը, թե «Տուհաց գաւառը» և Արտիմեդ քաղաքը այլուր հիշված չէ»։ Մինչդեռ հիշված է՝ V դարի առաջին կեսի հեղինակ Դավիթ Քերականի մոտ, որը Դիոնիսիոս Թրակացու նշած «փոյուգացի» և «գալատացի» անվանումները փոխարինել է «գոդերձական, տուհ, վրացի» հասկացություններով։ Համապատասխան նախադասությունը հետևյալն է. «Ազգական է, որ ազգի է յայտական, որպէս գոդերձական, տուհ, վրացի»...

Այսպիսով, կարող ենք ասել, որ V դարի հեղինակներ Դավիթ Քերականին և Մովսես Խորենացուն հայտնի է եղել «տուհ» անունով ազգություն, որի անունով էլ գավառը կոչվել է «Տուհաց»։ Մյուս կողմից էլ՝ տարբեր ազգություններ համարված գոդերձականները և վրացիները, գտնվելով Արարատյան դաշտից հյուսիս, ցույց են տալիս նաև տուհաց ազգի կամ Տուհաց գավառի նույն կողմերում գտնվելը...

Անկախ մասնրամասնություններից անառարկելի է, որ Վարդգես Մանկան հայրենիքը հյուսիսային Հայաստանում է, իսկ նրա անունն ու մականունն էլ, իրենց միասնությամբ, հագեցված են հայկականությամբ»[3]։

Ինչպես տեսնում ենք, «Տուհաց գաւառը» հյուսիսային Հայաստանում տեղադրելու հիմքը Դավիթ Քերականի կողմից հիշյալ գավառի բնակիչներին գոդերձականների և վրացիների հետ միասին հիշատակելն է, նաև Քասախ գետով Վարդգես Մանկան Արտիմեդ գալը, որը, ըստ Աս. Մնացականյանի, հնարավոր է լոկ հյուսիսից։ Սրանց հիման վրա, ինչ խոսք, կարելի է նման եզրակացության հանգել, բայց այդ եզրակացությունը «անառարկելի» համարել գուցե մի քիչ համարձակ է։ Բայց, այդուհանդերձ, Աս. Մնացականյանի ինտուիցիան չի դավաճանել և նրա ենթադրությունը, մեր համոզմամբ, հաստատվում է։

Վարդգես Մանկան առասպելը, համաձայն Աս. Մնացականյանի, ստեղծվել է մ. թ. ա. VI դարում, հետևաբար տուհ, Տուհաց գավառ ցեղանունն ու տեղանունը գոյություն են ունեցել այդ ժամանակներում և դրանից էլ վաղ։

3 Նույն տեղում, էջ 230—231։

Հայկական ամենավաղ գրավոր աղբյուրները ժամանակագրական առումով առասպելի հորինման շրջանից հազար տարով ուշ են, հետևաբար պիտի ենթադրել, որ ավելի ուշ ժամանակ մեզ հետաքրքրող տեղանունը կարող էր փոփոխված լինել, կամ էլ այլ կերպ հնչել, քանի որ այլ աղբյուրներում այդ ձևով չի հանդիպում։ Մնում է դիմել ժամանակի տեսակետից առասպելին մոտիկ աղբյուրներին, կարևոր չէ, թե դրանք կարող են հայկական չլինել։

Հույն հեղինակներից ամենից մոտիկ է կանգնած Հերոդոտոսը (մ. թ. ա. V դար)։ Նա Հայկական լեռնաշխարհում, բացի հայերից, նշում է հետևյալ ցեղերին՝ սասպեյրներին, ալարոդներին և մատիեններին[4]։ Պարզ է, սրանց մեջ չկան «տուհ»-երը։ Դիմենք Քսենոփոնին. նա իր «Անաբասիսում» հիշում է խալդայներին, խալիբներին, մարդերին, հեսպերիտներին, փասիաններին և տաոխ-ներին (Ταόχ-οι)[5]։

Թվում է «Տուհ»-ի և «Տուհաց գաւառի» բանալին գտնվեց։ Դա ոչ այլ ինչ է, քան տաոխ-ն ու տաոխ-ների գավառը։ Հայերեն լեզուն հնչյունների տեսակետից մեկուկես անգամ հարուստ է հունարենից և հայերեն տառադարձությունը ունի բոլոր հավանականությունները ավելի ճիշտ լինելու, քան հունականը։ Եթե Քսենոփոնը լսել է տաոհ (գուցե տայո՞հ), ապա նա միայն տաոխ կարող էր դրել, քանի որ հունարենում չկա «հ» տառ։ Ինչ վերաբերում է «աո» (այո՞) ձայնավորներին, ապա տեղի է ունեցել սովորական ձայնափոխություն, երկու կից գտնվող ձայնավորները տվել են «ու» և տաոհ-ը դարձել է «տուհ»։

Վաղուց է հաստատված, որ տաոխներից առաջացել է Մեծ Հայքի 14-րդ նահանգ Տայքը։ Հետևաբար, Վարդգես Մանուկը եկել է հետագայում Տայք կոչված նահանգից։ Դավիթ Քերականը, ինչպես տեսնում ենք, իր օրինակի համար նշել է աշխարհագրական առումով իրար կից գտնվող էթնոսների անունները (գոդերձական, տուհ, վրացի), այսինքն վարվել է այնպես, ինչպես և իր ուսումնասիրության առարկայի հեղինակը՝ Դիոնիսիոս Թրակացին. փոյուգացիք և գալատացիք իսկապես որ իրար կից էին բնակվում։

«Մանուկ» հայերեն նշանակում է կտրիճ, հերոս, քաջ երիտասարդ[6]։ Մանուկ էր ոչ միայն մեր Վարդգեսը, այլև, ինչպես վկայում է ականատես Քսենոփոնը, տաոխ-ներն ընդհանրապես։ Հույների ձեռքը չընկնելու համար նրանք՝ կանայք և տղամարդիկ, իրենց երեխաներով հանդերձ, նախընտրում էին ժայռից ցած գահավիժել[7]։ Պարսից արքայից արքան անգամ չէր կարողացել նրանց հպատակեցնել։

Եթե Տուհաց գավառից եկած հերոսի անունը և մականունը՝ Վարդգես Մանուկ «իրենց միասնությամբ հագեցված են հայկականությամբ»[8], ապա դա խոսում է նշված գավառում նաև հայկական էթնոսի առկայության մասին։

---

4 Herod., III, 94։

5 Xen., Anab., IV, 3, 4, 5, 8։

6 Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 229։

7 Xen., Anab., IV, 7, 13։

8 Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 231։

Եթե տուհ— Ταοχ-ος-ի մեր նույնացումը հաստատվի, ապա Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված առասպելի բեկորը է՛լ ավելի արժեքավոր է դառնում, քանի որ հայկական հնագույն էպոսի տարածքային արեալը է՛լ ավելի է ընդարձակվում, ընդգրկելով նաև Տայքը։ Եվ ոչ միայն տարածքային, այլև ժամանակագրական, մեզ տանելով այն ժամանակները, երբ «տայեցիք» դեռևս տուհ— Ταοχ-οι էին կոչվում[9]։

К ЛОКАЛИЗАЦИИ «ОБЛАСТИ ТУХОВ»

Доктор историч. наук Р. М. БАРТИКЯН

(Резюме)

В «Истории Армении» Мовсеса Хоренаци (кн. III, гл. 65) сохранились фрагменты древнеармянской легенды о храбром Вардгесе, прибывшем ко двору царя Ерванда «из области тухов», местоположение которой неизвестно. В статье делается предположение, что речь идет о стране упомянутых Ксенофонтом «таохов», то есть о Тайке.

---

9 *Դավիթ Քերականի «տուհ»-ը պիտի վերապրուկ համարել։*